

ԲԱՂԸՅՈՒՍԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Լճզվի բառապաշարը անմիջականորեն ու յուրովի ժողովրդի ողջ տնտեսական-հասարակական, մտավոր ու հոգևոր կյանքը, արտաքին աշխարհի քաղմաղան երևույթները, իրողություններն ու իրադարձություններն է արտացոլում՝ իրենց բաղմազան կապերով ու հարաբերություններով: Պարզ բառերի համեմատությամբ բաղադրյալ (ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր) բառեր, անշուշտ, ավելի լայն ծավալ ունեն և, եթե կարելի է ասել, ո՛չ թե սոսկ մի հասկացություն կամ մի կոնկրետ երևույթ, իրողություն, այլ բաղմազան թելերով իրար հետ կապված, սերտ կապերի ու փոխհարաբերությունների մեջ գտնվող երևույթներ ու իրողություններ են ցույց տալիս: Բաղաֆացի, բաղաֆալին, բաղաֆակյան, բաղաֆացիական, բաղաֆացունի, բաղաֆացիություն, բաղաֆակնություն, բաղաֆակնապես..., բաղաֆաբնակ, բաղաֆագետ, բաղաֆակիրք, բաղաֆամաս, բաղաֆառեղ, բաղաֆառնետես, բաղաֆատիւյ..., բաղաֆալբություն, բաղաֆաշինական, բաղաֆառնետեսական և այլն բաղադրյալ բառերն, օրինակ, կազմված լինելով բաղաֆ բառի հիմքի վրա, ամենից առաջ բաղաֆ-ին վերաբերող, բաղաֆ-ի հետ կապվող այլազան նշանակություններ են արտահայտում:

Այդպես և բոլոր տեսակի բաղձյունական բարդությունները ո՛չ թե տարե-
բայնորեն, այլ միանգամայն օրինաչափորեն կազմվում են այնպիսի բառերի
հարադրությամբ, որոնք սերտորեն իրար հետ կապվող, ինչ-ինչ թելերով իրար
հետ առնչվող երևույթներ կամ իռոգություններ են ցույց տալիս:

Հայերենում նման կապերի լեզվական արտահայտության մի տեսակ են բաղճյուսական բարդությունները, որոնք ու շաղկապի միջոցով իրար են կապում որևէ հարաբերության, փոխադարձ կախվածության և կապակցության մեջ գտնվող հասկացություններ: Ըստ որում՝ դրանց բազմազանության համապատասխան բաղճյուսական բարդությունները են բազմազան ու բարդ պատկեր են ներկայացնում, հատկանշվում իրար հետ հարադրվող բաղադրիչների տարաստիճան իմաստային միաստամանրով ու կապակցումներով:

Եվ իսկապե՛ս. բաղճյուսական բարդութիւններն ամբողջութեամբ միահաշուում են բազմաբնույթ բառեր, ցույց տալիս մի առարկայի, երևույթի, իրողութեան կապն ու հարաբերութիւնն այլ առարկայի, երևույթի կամ իրողութեան հետ, ազդանշում, թե ինչպիսի բառեր են հարադրվում իրար հետ, թե ինչ բառեր են, որ ավելի սերտ, և ինչ բառեր են, որ համեմատաբար թույլ կապով են կապակցվում, թե որոնք են, որ սերտ փոխկախվածութեան մեջ են գտնվում և սովորական գործածութիւնն ունեն, և որոնք են, որ հեռավոր առնչութեամբ, թույլ ու հեղհեղուկ կապով են կապվում իրար հետ և ծնունդ են առնել գեղարվեստական, պատկերավոր խոսքում՝ նրա իսկ պահանջով: Նման տարաստիճանավորումներից, սակայն, վերանալով, ասենք, որ բաղճյուսական բարդութիւնները մերձակից, առնչակից իմաստներ արտահայտող բառերի հարադրութեամբ կազմված բարդութիւններ են և առաջ են եկել որոշակի տրամաբանական հիմքի վրա՝ որոշակի օրենքներով ու կանոններով: Այսպե՛ս՝ ահ (Շվախ, երկլուծ) բառը բաղճյուսական բարդութիւններ է կազմում դղ, երկլուծ, գար (<*gawh)¹, գարգաեղ. մահ, սարսափ, վախ, տագնապ, այլև՝

¹ Դրա մասին տե՛ս մեր «Բառաքննություն» հոդվածը (Բանբեր Երևանի Համալսարանի», 1981, № 1, էջ 181):

զարկ, լաց, կսկիծ, տառակուսանք, տխրութիւն, փախ բառերի հետ հարադրովելով (հմմտ. ան ու զոդ, ան ու երկյուղ, ան ու սարսափ, ան ու վախ, ան ու ման, ան ու փախ և այլն), որովհետեւ դրանց միջեւ իրապես իմաստային կապ ու առնչություն գոյություն ունի, և եթե իրոք, զոդ, երկյուղ, զար (<զարհ), զարգանդ, սարսափ, վախ, տագնապ բառերը՝ նույնպես ան, ապա մյուսները (ման, լաց, կսկիծ, տառակուսանք, տխրութիւն, փախ) դրան ավել կամ նվազ չափով առնչվող նշանակություն են արտահայտում:

Կամ՝ մայր բառով մայր ու աղջիկ, մայր ու զավակ, մայր ու մանուկ, մայր ու որդի, մայր ու տղա և նման բաղձնական բարդություններ են կազմվում, որովհետեւ իրական կյանքում իրոք շատ սերտ կապեր կան մոր ու աղջկա, մոր ու մանկան, մոր ու զավակի, մոր ու որդու, մոր ու տղայի... միջև՝ նմանապես՝ լաց բառը կարող է հարադրվել ու հարադրվում է աղաղակ, աղաչանք, թաց, ծալիտ, խում, ծիծաղ, կոծ, հառաչ, շիվան, ողբ, սուգ, վայնասուն (հմմտ. լաց ու աղաչանք, լաց ու թաց, լաց ու կոծ, լաց ու սուգ և այլն) և ոչ թե, ասենք հող, ծառ, արեւ, մազ, քաղաք և այլ բառերի հետ, որովհետեւ առաջիններն իրենց նշանակությամբ հարաբերակցվում են լաց բառի հետ, արտահայտում կամ նույն, կամ նրան առնչվող, կամ հակառակ նշանակություն:

Վերջիններե հաճող ու անդաստան (||արոտ, արոտ, բաղ, գլուղ, դաշտ, լեռ, խութ, հարեան, հող, ձոր, սար, շու) կամ դաշտ ու այգի (||անտառ, արոտ, արոտ, գետին, երկինք, լեռ, հանդ, հովիտ, ձոր, մերի, շու, պարտեզ, բլուրակ, սար, տափ) բաղձնական բարդությունները, որոնց բառ բաղադրիչները հիմնականում միանման կամ հարաբերակից տեղի իմաստներ են արտահայտում: Եվ թեեւ դրանց մեջ կան անգամ դեպքեր (հմմտ. հաճող ու հարեան, դաշտ ու երկինք), որոնց բառ բաղադրիչները իմաստով այնքան էլ մոտ չեն իրար, բայց ինչ-ինչ կողմերով կամ նշանակություններով նրանք դարձյալ հարաբերակցվում ու կապվում են իրար հետ: Դրանում, թերեւս ոչ ավելորդ անգամ, կարելի է համոզվել, համեմատելով նաեւ ծիլ ու ծաղիկ (||բողբոջ, ծաղկունք, ծառ, ճյուղ, ոստ), խաղ ու պար (||երգ, զրույց, ծիծաղ, կատակ, տաղ), հուր ու բոց (||արյուն, ծուխ, կաթակ, կրակ, մուր, ջուր, սուր, տապ), ձայն ու աղմուկ (||իրավունք, ծպտուն, ծպուտ, հայացք, *ծուն), շար ու բարի (||շառ, վառ) բաղձնական բարդությունները, որոնցում միանգամայն օրինաչափորեն ծիլ բառը՝ բողբոջ, ծաղկունք, ծառ, ճյուղ, ոստ, խաղ-ը՝ պար, երգ, զրույց, ծիծաղ, կատակ, տաղ, հուր-ը՝ բոց, արյուն, ծախ, կաթակ, կրակ, մուր, ջուր, սուր, տապ, ձայն-ը՝ աղմուկ, իրավունք, ծպուտ, հայացք, *ծուն, վերջապես՝ շար-ն էլ բարի, շառ, վառ բառերի հետ է հարադրվել ու բաղձնական բարդություններ կազմել:

Այսպիսով՝ բերված փաստերը շատ պարզ ցույց են տալիս, որ բաղձնական բարդությունները կազմվում են իրոք իմաստաբանորեն իրար մերձակից ու հարաբերակից բառերի հարադրությամբ, որոնք էլ իրենց հերթին ևս բազմազան ու բազմաճոխ պատկեր են ներկայացնում: Կան բառեր, ինչպես՝ ազգ, ամս, աչք, արտ, բան, բարձր, բույ, գետ, դուռ, երգ, բուր, լայն, լաց, լույս, խոսք, ծառ, կոշտ, հաց, հող, ձև, ճիշ, մեծ, շեն, ջուր, սար, սեր, սև, սուր, վարդ, տեր, տուն, ցավ, ուծ, փառք, քար, օր, որոնք ավելի շատ բառերի հետ են հարաբերակցվում: Եվ, ընդհակառակն, կան նաեւ բառեր, ինչպես՝ աջ, բանտ, բեռ, գան, գող, դար, ետ, թանկ, ժամ, կուծ, մեղր, ներս, շաղ, շոգ, շուն, ցող, քեֆ..., որոնք իրենց նշանակության համապատասխան համեմատաբար քիչ թվով բառերի հետ են բաղադրվում ու բաղձնական բարդություններ կազմում, հմմտ. աջ ու մալ, աջ ու անյակ, բանտ ու արտ, բանտ ու կախաղան, բեռ ու լուծ, գան ու զավազան, գան ու թագ, գող ու ավազակ, դատ ու դատաստան, ետ ու առաջ, թանկ ու էծան, ժամ ու ժամանակ, ժամ ու պատահաք, կուծ ու կուլա, մեղր ու կարագ, ներս ու դուրս, շաղ ու շոգ, շոգ ու կրակ, շոգ ու տաք, շուն ու կառու, ցող ու շաղ, ցող ու անձրեւ, քեֆ ու հալ, քեֆ ու ծիծաղ և այլն: Սակայն երկու դեպքում էլ բաղձնական բարդությունների՝ իբրեւ իմաստապես առնչակից կամ հարաբերակից բառերի հարադրությամբ կազմված բարդությունների մեջ իմաստային ավելի սերտ ու

ամուր կապով աչքի են ընկնում հատկապես այն բարդությունները, որոնք արտահայտվում են՝

ա) նույն բառի կրկնությամբ, ինչպես, օրինակ՝ այլևայլ, ավելի ու ավելի, դեմ ու դեմ, ետ ու ետ, լիովի, ծակ ու ծուկ, նոր ու նոր, վեր ու վեր, սուս ու փուս, ֆիշ ու միշ, ֆեզ ու ֆեզ և այլն։ Նման բաղճյունական բարդություններն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի. մի մասում եթե կրկնվող բառ բաղադրիչը պահպանվում է նույնությամբ, արտահայտելով սաստկական, հավելական կամ մի այլ նշանակություն, օրինակ՝ առաջ ու առաջ, բարձր ու բարձր, գնալ ու գնալ, նիշտ ու նիշտ, շատ ու շատ և այլն, ապա մյուս մասում այն կրկնավոր բարդությունների հատուկ հնչյունական փոփոխություն է կրում՝ համապատասխան իմաստային երանգ հաղորդելով բարդությանը, օրինակ՝ ախտ ու բախտ, շուտ ու մուտ, ձեն ու ձուն, հին ու մին, չեմ ու չում, սուս ու փուս, բայ ու բույ և այլն։ Մի քանի բնագրային օրինակներ. «Ախտ ու բախտից զրկվել եմ» (ՍՄ, ՀՔԲ, 1, 22), «Առո՛ք ու փառո՛ք ետ դարձավ նա տուն» (ՊՍ, ԵԺ, 4, 142), «...էլի նայեց կնոջ բացումաց տեղերին» (ՄԳ, Բով., 223), «Բաժին մտնում էր խրճիթի հազար ու մի ծակ ու ծուկերից» (ՆԴ, ԵԺ, 1, 94), «— Ես ծուռ ու մուտ գնացողին..., Զէ՛, չեմ սիրում, ես չեմ ուզում» (ԱԻ, ԵԺ, 2, 242), «Նայում էր հեռուն, կածանի կեռումեռ պտույտին» (ԱԲ, ԵԺ, 1, 76), «Ընչանք սրանց հանգ ու հունգը, արևն էլ իր պարտքից պրծավ, գնաց դնջանալու» (ՊՊ, ԵԺ, 1, 245), «Քե՛ք էր անում մեն ու մենակ» (ՀՀ, ԵԺ, 2, 15), «Ողջ ամառը շուտ ու մուտ» (ԱՅ. Խնկ., Ե, 45), «Ուստեն մի քիչ շփոթվեց, չեմ ու չում արավ ու գնաց» (ՀԹ, ԵԺ, 3, 64), «Սուս ու փուս քաշվում, կորչում է գիշերվան խավարի մեջ» (ՀԹ, ԵԺ, 3, 161), «— Կազեթումը սուս ու մուտ բաներ շատ են գրում» (ՀԹ, ԵԺ, 3, 15), «Ի՛նչ լավ է, որ ֆիշ ու միշ կարդալ գիտեմ» (ՂԱ, ԵԺ, 2, 534) և այլն։

բ) Հոմանիշ (նույնանիշ և համանիշ) բառերի հարադրությամբ, ինչպես, օրինակ՝ ան ու դոդ (||երկյուղ, զարգանդ, սարսափ...), աղմուկ ու ժխոր, ամպ ու բալ, արտ ու հանդ (||դաշտ), բանտ ու զեղան, բան ու զարծ, բերդ ու ամրոց, բոց ու կրակ (||հուր), բուրդ ու բզիկ, բու՛ք ու բորան (||հողմ, փամփ, փոթորիկ), գեր ու պարարտ, գիր ու տառ, դաս ու խրատ, դատ ու դատաստան, դեղ ու հեար (||հար||դարման), դոդ ու սարսուռ (||սարսափ), դուլ ու դադար, զով ու հով, թագ ու պսակ, թել ու դերձան, թոփսյ ու ամպ, ժայռ ու ֆար, իղծ ու երազ (||տեղեղանք, փափագ), լաց ու կոծ (||թաց, կական, շիվան, սուգ, ողբ), խաղճ ու առակ (||խալտառակ), խենթ ու խելառ, խոսք ու գրույց (||բան), ծաղր ու ծանակ (||ծիծաղ, կատակ), ծեծ ու կոխվ (||ջարդ, թակ), ծովս ու մովս, ծով ու պաս, կազմ ու պատրաստ, կայծ ու բոց (||կրակ), կանչ ու աղաղակ (||ծիծաղ, հունչ, ձայն, հիշ), կիսատ ու պատտ, կոխվ ու վե՛ն (||տուրուրդմբոց, պատերազմ), հավ ու նիվ, հատ ու կտոր, հարգ ու պատիվ, հավ՛ք ու թոշուն, հարթ ու ուղիղ, հեշտ ու դյուրին, հոգի ու շունչ, հոգս ու կարի՛ք (||ցավ, վիշտ), հողմ ու փոթորիկ, հուր ու բոց (||կրակ, տապ), հույս ու հավաա (||ապավեն), հար ու դարման (||դեղ, հեար, համփա...), հիշ ու աղմուկ (||աղաղակ, կանչ...), մուք ու խավար, մշուշ ու մեգ, շանթ ու կայծ (||կայծակ, կրակ, հուր, որոտ), շաշ ու շառաշ, շոգ ու տաֆ, պարզ ու պայծառ (||վե՛ն, ջինջ...), չարդ ու բուրդ, շերմ ու տենդ, սև ու մուք, սուգ ու լաց (||շիվան, կոծ), սուր ու թուր, վիշտ ու ցավ (||կսկիծ, մարմոխ...), տենչ ու երազ (||կարոտ), ցան ու ցիր, ցավ ու դարդ (||կսկիծ, վիշտ), ուշ ու միտք, ուրախ ու զվարթ, փակ ու խուփ, փառք ու պատիվ (||պարծանք), փաղցր ու անուշ, փունջ ու պուճախ և այլն։

գ) Հականիշ բառերի հարադրությամբ, ինչպես, օրինակ՝ այս ու այն, աջ ու ձախ (||անյակ), առ ու ծախ, առևտուր (||առուտուր), բարձր ու ցածր, բաց ու գոց (||խուփ), գառ ու գազան, գիշեր ու ցերեկ, գնալ ու գալ, գալ ու գնալ, դար ու խոր (||փոս), դես ու դեն, դոստ ու դուշման, դուրս ու ներս||ներս ու դուրս, ելե՛ք, ելումուտ (||ելմուտ), ելք ու մուտք, ետ ու առաջ, երթ ու գալ, Երկինք ու երկիր, զոր ու գիշեր, թանկ ու էժան, լավ ու վատ, լաց ու ծիծաղ,

խեր ու շառ, խինդ ու լաց (||վիշտ, ցավ), ծանր ու թեթև, ծով ու ցամաք, կյանք ու մահ, հալալ ու հարամ (բրբ.), հաստ ու բարակ, հեռու ու մոտ, հա ու չէ (խոսակց.), հին ու նոր, մեծ ու փոքր (||պատիկ, պոմոտ, փոքրիկ), մուր ու լույս, շատ ու քիչ, շուն ու կատու, չոր ու թաց (||գեջ), չար ու բարի, սար ու ձոր (||խոր), սև ու սպիտակ, վար ու վեր, վերջ ու սկիզբ, տակ(ն) ու վրա (||երես, գլուխ), տեր ու ծառա, ցավ ու խնդում, ուրախ ու տխուր և այլն: Եվ, այնուհանդերձ, դրանք երբեք իրենց բնույթով ու բովանդակությամբ չեն տարբերվում մյուս տեսակի՝ բազմազան իմաստային առնչակցություններ ու հարաբերություններ արտահայտող բառ-բաղադրիչներից կազմված բարդություններից (օրինակ՝ դուռ ու պատուհան, կարգ ու կանոն, ջենք ու շեռքենք, կար ու նե, շափ ու սահման, տուն ու տեղ, աղ ու հաց, հաց ու պանիր, բույր ու եղբայր, օր ու արև և այլն), որոնք և, պետք է ասել, շատ ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն բաղճյուսական բարդությունների ընդհանուր կազմում:

Բաղճյուսական բարդություններն ամբողջությամբ առած աչքի են ընկնում իմաստային-իմաստաբանական մի այլ առանձնահատկությամբ ևս. նրանց մեջ հարադրվող, ու (և) շաղկապով կապակցվող բաղադրիչները հիմնականում պահում-պահպանում են իրենց բուն՝ բառային իսկական իմաստը: Ազգ ու բարեկամ, ամալ ու մեզ, աչք ու ունք, բան ու բրիչ, դաշտ ու սար, ետ ու առաջ, երգ ու ծիծաղ, գենք ու գրան, թեր ու դեմ, լուռ ու մունջ, խոսք ու գրույց, ծիլ ու ծաղիկ... բաղճյուսական բարդություններում, օրինակ՝ ազգ և բարեկամ, ամալ և մեզ, աչք և ունք, բան և բրիչ... բառ-բաղադրիչները մի կողմից թեև իրոք գործ են ածվում իրենց բուն իմաստով, ապա մյուս կողմից՝ միանալով՝ կազմում են մի բառային միություն՝ հավաքական, ընդհանրական կամ այլ նշանակությամբ: Այդ պատճառով էլ բաղճյուսական բարդության մեջ բառ-բաղադրիչները միմյանց նկատմամբ գտնվում են համադաս հարաբերության մեջ և իրար հետ միանում-միահյուսվում են իբրև հավասարազոր, լիիրավ միավորների: Իսկ դա իր հերթին պայմանավորում է ու (և)-ի, իբրև համադասական շաղկապի, դերով ու գործառույթով: Այսքանից, սակայն, չի հետևում, թե համազոր ու համադաս փոխադարձությունը մեք գտնվելով՝ բաղճյուսական բարդության բառ-բաղադրիչները կարող են ազատորեն տեղադրվել, ընկնել ետ կամ առաջ: Բայց կան բաղճյուսական բարդություններ, որոնք կազմվում են երկու ձևով՝ բաղադրիչների տեղափոխությամբ կամ ետևադրությամբ:

Հմմտ.

առաջ ու ետ	ետ ու առաջ	հեռու ու մոտ	մոտ ու հեռու
բոց ու կրակ	կրակ ու բոց	մեծ ու փոքր	փոքր ու մեծ
գիշեր ու դօր	դօր ու գիշեր	ջանք ու ճիգ	ճիգ ու ջանք
դուրս ու ներս	ներս ու դուրս	ցան ու ցիր	ցիր ու ցան
խելք ու միտք	միտք ու խելք	քար ու հող	հող ու քար

Բնագրային օրինակներ. «Մենք գամ ու թագ չենք ունեցել» (Գէ, ԱՏ, 14), «—Ունի բագ ու գան շրջեղ, փառավոր» (ՌՊ, Ե, 115), «Աջ ու ձախ խոր ձորեր են» (ԱԲ, ԵԺ, 1, 177), «—Թնդյուն, աղմուկ-վառվում են լոկ Դերոշները ձախ ու աջ» (ՀՀ, ԵԺ, 1, 193), «Ջուռնաչու կնկան հարցրին թե՛ պար խաղալ գիտես. ասաց՝ բան ու գո՞րծս ինչ է» (ԱՂ, Առ., 91), «—Ինձ հանեցիր իմ գործ ու բանէն» (ՆՀ, Բան., 59), «Ջղուտ բանվոր էր արդեն դաշտ ու սարի գլուղացին» (ԵԶ, ՀԵ, 31), «—Հովն է խաղում սար ու դաշտում» (ՀՀ, ԵԺ, 1, 50), «Գործն է խոսվում լավ ու վատ» (ՀԹ, ԵԺ, 2, 150), «—Սա հաղորդում է վատ ու լավ լուրեր» (ՊՄ, ԵԺ, 2, 71), «Գիշեր ու զօր կյանքը գու ևս գարդարում» (ՎՏ, ԵԺ, 86), «—Ջօր ու գիշեր երկինքը ցողում է» (ՄԳ, Բով., 127), «Տասը տարի անցած՝ երիտասարդ մաշկարարը ամուսնացավ, տուն ու տեղ

դրավ...» (ՂԱ, ԵԺ, 2, 452), «—իմ կյանքն են նրանք, իմ տուն ու տեղը», (ՀՄ, ՍՐ, 187) և այլն:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ նման ձևով են գործածվում հիմնականում այն բաղճյուտական բարդությունները, որոնց բաղադրիչները հոմանիշ (օրինակ՝ մեզ-մշուշ, շանգ-նիգ, սուգ-լաց...), հականիշ (օրինակ՝ վեր-վար, ներս-դուրս, գնալ-գալ, ետ-առաջ, չոր-թաց...) կամ նշանակությամբ շատ մոտ, ավելի սերտ փոխհարաբերության մեջ գտնվող (օրինակ՝ համ-հոտ, ժայռ-սար, արտ-կալ, դուռ-տուն, երգ-պար, հոգ-խար...) բառեր են: Բացի այդ, նկատելի է, որ տեղաշարժման են ենթարկվում գերազանցապես միավանկ (հմմտ. դարդ ու ցավ-ցավ ու դարդ, վար ու վեր-վեր ու վար, շաղ ու շող-շող ու շաղ, ան ու ման-ման ու ան...) և մասամբ՝ միավանկ+երկվանկ կամ երկվանկ+միավանկ բաղադրիչներից (հմմտ. բոց ու կրակ-կրակ ու բոց, հանդ ու արուտ-արուտ ու հանդ, արև ու կյանգ-կյանգ ու արև, մշուշ ու մեզ-մեզ ու մշուշ...) կազմված բաղճյուտական բարդությունները: Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե ցանկացած դեպքում, թերևս հենց նման բաղադրիչների տեղափոխությանը, կարելի է բաղճյուտական բարդություններ կազմել, և կամ՝ բաղադրիչների ետևադասությանը կազմված ձևերը հավասարապես ու հավասարաչափ գործածություն ունեն հայոց լեզվում. ամենևին, Փաստերը դարձյալ հավաստում են, որ առանձին դեպքերը (հմմտ., օրինակ, արա ու հանդ-հանդ ու արա, բոց ու կրակ-կրակ ու բոց, գնալ ու գալ-գալ ու գնալ, գալ ու հով-հով ու գով, վար ու վեր-վեր ու վար, ցան ու ցիւր-ցիւր ու ցան և այլն) չհաշված, զուգադիր ձևերից մեկն է միայն ավելի սովորական ու թափուրականը. աղ ու հաց-հաց ու աղ, աչ ու ձախ-ձախ ու աչ, օր ու արև-արև ու օր, բառ ու բան-բան ու բառ, տուն ու տեղ-տեղ ու տուն, նիստ ու կաց-կաց ու նիստ, համ ու հոտ-հոտ ու համ և այլն զուգադիր օրինակներից առաջիններն են, որ ավելի սովորական ու ընդհանուր գործածություն ունեն: Իսկ սա նշանակում է, որ իբրև իմաստապես մերձակից կամ առնչակից, ինչ-ինչ թելերով իրար հետ կապված բառերի հարադրությամբ կազմված ձևեր, բաղճյուտական բարդությունները, իրոք, ժամանակի ընթացքում մշակվել ու սրբադործվել են լեզվի ստեղծողի՝ ժողովրդի կողմից, որ ինքը ժողովուրդն է հենց առաջնությունը կամ առաջնությունը տվել մեկին, ամրակայել ու ամրապնդել դրա գործածությունը: Լավագույն ասպացույց կարող է ծառայել, օրինակ, աղուհաց||աղ ու հաց բաղճյուտական բարդությունը, որ, ի դեպ, եթե ուսուներենում արտահայտվում է հակառակ շարադասությամբ хлеб да (х) соль (հմմտ. մուրեմ ու մանգաղ-серп и молот), ապա հայերենում մասնավոր դեպքերում՝ այն էլ՝ ոճական նկատառումներով կամ բանաստեղծական խոսքի պահանջով է շրջուն ձևով գործածվում, օրինակ՝ «...Որը ասողով ա աղոթում, արշտոտալով ասում նիսթ (աչք) ա դիպել, որը մի կտոր հաց ու աղով, որը քարով» (ՊՊ, ԵԺ, 1, 201), «Մի շան չափ էլ չի ճանաչել հաց ու աղ» (ԶԲ, 571):

Բաղադրիչների ետևադասությամբ կազմված կամ զուգադիր բաղճյուտական բարդությունները եթե ընդհանրապես նույն նշանակությունը կամ իմաստն են արտահայտում, ապա իրենց կազմում՝ բաղադրիչների փոխհարաբերության տեսակետից, անշուշտ, տարբերվում են իրարից: Այսպես՝ անվիճելի է, որ վեր ու վար և վար ու վեր, գնալ ու գալ և գալ ու գնալ, հանդ ու դաշտ և դաշտ ու հանդ, տուն ու տեղ և տեղ ու տուն, փար ու փանդ և փանդ ու փար և այլն զուգադիր բաղճյուտական բարդությունները, ամբողջապես նույն կամ միատեսակ նշանակություն արտահայտելով հանդերձ, իրարից տարբերվում են նրանով, որ մի դեպքում, ասենք, վար-ին հաջորդում է վեր-ը, գնալ-ին՝ գալ-ը, հանդ-ին՝ դաշտ-ը, տուն-ին՝ տեղ-ը, փար-ին՝ փանդ-ը, իսկ մյուս դեպքում՝ ճիշտ հակառակը:

Հայոց լեզվում, սակայն, գերիշխողը ոչ թե նման, այլ այն բաղճյուտական բարդություններն են, որոնց բաղադրիչներն իրենց կայուն ու հաստատուն տեղն ունեն, չեն տեղաշարժվում, ինչպես, օրինակ՝ ազգ ու ազգամուն, այր ու բեն (այրուբեն), աչք ու ունք, անց ու դարձ, բաց ու խոսք, բուք ու բուրան, գագ ու կես, գիշեր ու ցերեկ, գիրկ ու ծոց, գունդ ու կծիկ, դատ ու դատաստան, դես ու Լոբեիր 6—2

դեն, թուֆ ու մուր, ժամ ու պատահագ, լուռ ու մուկ, խաղֆ ու խայտառակ, խեղդ ու կրակ, կար ու ձև, ծաղր ու ծանակ, ծանր ու թեթև, կազմ ու պատրաստ, կռիվ ու կռվա, հալ ու մաշ, հարց ու պատասխան, հարս ու փեսա, ձի ու քոբի, հար ու համփա, մեկ ու կես (*մեկուկես*), մուրհ ու մանգաղ, շենֆ ու շնորհֆ, շուն ու կատու, ողջ ու առողջ, ոչ ու փուշ, չորս ու հինգ, պարտ ու պատշահ, շարդ ու բուրդ, սուր ու կրակ, վար ու ցան, տակն ու վրա, տեք ու տեօրեն, ուժ ու կարողություն, ֆանդ ու ֆարափ, օր ու գիշեր և այլն: Իսկ դա պայմանավորվում է լեզվական ու տրամաբանական որոշակի օրենքներով, բաղադրիչների արտաքին հնչյունական կառուցվածքով, նրանց կապերի ու փոխհարաբերությունների բնույթով, ինչպես նաև՝ այն սովորական շարահյուսական կապակցություններով, որոնց հիմքի վրա ստեղծվել և հաճախակի գործածությամբ ընդհանրացել են նման բաղահյուսական բարդությունները:

Եվ իսկապես... դրանք հենց միայն այդպես են գործածվում, որովհետև երկրորդ բաղադրիչն առաջինից բխող, նրան հաջորդող, նրա շարունակությունը, հետևանքը կաղմող նշանակություն է արտահայտում կամ պարզապես երկար լինելով՝ չի կարող տեղաշարժվել և իբրև առաջին բաղադրիչ գործածվել: Այբուբեն, բաց ու խուփ, գազ ու կես, հալ ու մաշ, հինգ ու վեց, վար ու ցան և այլ միավանկ բաղադրիչներից կազմված բաղահյուսական բարդություններում, օրինակ՝ բեն, խուփ, կես, մաշ, վեց, ցան... բաղադրիչներն իրապես նախորդներին հաջորդող, նախորդների նշանակությամբ պայմանավորվող իրողություններ են ցույց տալիս և հետևաբար՝ նրանցից առաջ ընկնել ու հակառակ տեսքով՝ *բեն ու այբ, *խուփ ու բաց, *կես ու գազ, *մաշ ու հալ, *վեց ու հինգ, *ցան ու վար բարդություններ կազմել չեն կարող: Այդպես և ազգ ու ազգանուն, դատ ու դատաստան, խաղֆ ու խայտառակ, հարց ու պատասխան, մուրհ ու մանգաղ, տեք ու տեօրեն, ուժ ու կարողություն... բաղահյուսական բարդություններում երկրորդ բաղադրիչները, որ նույն կամ տարբեր իմաստ են արտահայտում, բացառապես ետադաս են գործածվում հիմնականում այն պատճառով, որ երկար լինելով (նրանցից միայն մեկը՝ մանգաղ-ն է երկվանկ)՝ միավանկ բառ-բաղադրիչներին հաջորդելով միայն կարող են հեշտորեն արտաբերվող բարդություն կազմել:

Այսպիսով՝ բաղահյուսական բարդություններն, իրոք, տրամաբանական որոշակի հիմքով, բառակազմական-իմաստաբանական հաստատուն օրենքներով ստեղծված վերլուծական (հարադրական) բարդություններ են, որոնք նույնպես արտացոլում են ժողովրդի մտածելակերպը, նրա վերաբերմունքը զանազան իրողությունների, երևույթների և նրանց միջև դրսևորվող կապերի ու հարաբերությունների նկատմամբ:

Կազմվելով այլազան կապերով իրար հետ կապված, իմաստամերձ կամ իմաստով առնչակից բառերի հարադրությամբ, բաղահյուսական բարդությունները միաժամանակ իմաստաբանական առավել բարդ պատկեր են ներկայացնում: ամենից առաջ հարադրվող բառերը նրանց մեջ մի կողմից եթե սովորաբար պահում են իրենց բուն բառային իմաստը, ապա մյուս կողմից՝ միահյուսվելով ու ամբողջանալով՝ նաև մի ընդհանուր նշանակություն են արտահայտում: Իսկ այդ ընդհանուր նշանակություններն էլ նույնպես բավական բազմազան են ու բազմաբնույթ. նույն բառի կրկնությամբ կազմված բաղահյուսական բարդություններն, օրինակ, շատ ու շատ, հին ու հին, այլ և այլ, դեմ ու դեմ, վեր ու վեր, ով ու ով, չար ու չար, քեզ ու քեզ..., բան ու ման, կուշ ու մուշ, ձիք ու միք, ծակ ու ծուկ, սուտ ու փուտ, ձեն ու ձուն, սաստկացնում կամ զորացնում են նրա նշանակությունը, ավելի ակնհեր դարձնում անհատի կամային վերաբերմունքը այս կամ այն իրողության ու երևույթի հանդեպ:

Հոմանիշներից (նույնանիշներից և համանիշներից) կազմված բաղահյուսական բարդությունները, օրինակ՝ ան ու դող, լաց ու կոծ, ախ ու վախ, դուլ ու դադար, մեզ ու մշուշ, բոց ու կրակ, մութ ու խավար, դարդ ու ցավ և այլն, իրար են միահյուսում միանման կամ շատ մոտ իմաստներ, արտահայտելով դարձյալ սաստկական կամ ավելի զորավոր նշանակություն:

Հականիշներին կազմված բարդությունները, օրինակ՝ քացի ու խուփ, գնալ ու գալ, ներս ու դուրս, թանկ ու էժան, հաստ ու բարակ, գիշեր ու ցերեկ, դար ու փոս, խինդ ու լաց և այլն, իրենց մեջ համատեղում են իրար հակադիր իմաստներ և արտահայտում այն հակադրամիասնությունները, որ իրապես գոյություն ունեն գանազան իրողությունների, երևույթների միջև:

Եվ վերջապես՝ այն բաղճյուսական բարդությունները՝ ազգ ու բարեկամ, աղ ու հաց, մարդ ու կին, հարց ու պատասխան, զենք ու զրան, խոսք ու խրատ, խույ ու համր, ծիլ ու ծաղիկ, մայր ու աղբիկ, մեղր ու կարգ, հաց ու պանիր, ծեռք ու ոտք, ուլ ու գառ, փթ ու բերան և այլն, որոնց բաղադրիչները առնչակից կամ հարաբերակից իմաստներով են կապվում իրար հետ. դրանք միահյուսելով մի ընդհանուր՝ հավաքական կամ ամբողջական նշանակություն են արտահայտում: Կազմվելով հիմնականում նույն խոսքի մասին պատկանող բառերի հարադրությամբ (հմմտ., օրինակ, աչք ու ունք, կարգ ու կանոն, ծափ ու ծիծաղ..., ալ ու ալվան, բարձր ու ցածր, խենթ ու խելառ..., անց ու դարձ, կեր ու խուս, նիստ ու կաց..., ներս ու դուրս, վեր ու վար, ետ ու առաջ..., ախ ու վախ, վաշ ու վիշ, հայ ու հույ...), նրանք ամենևին սոսկ մենիմաստ բարդություններ չեն. բազմաբանակ փաստերը ցույց են տալիս, որ ինչպես մյուս՝ պարզ ու բաղադրյալ բառերը, այնպես էլ բաղճյուսական բարդությունները լիներում են մենիմաստ ու բազմիմաստ: Ի տարբերություն, սակայն, պարզ և նաև համադրական բաղադրյալ բառերի, բաղճյուսական բարդություններն ավելի շատ կամ մեծազույն մասով մենիմաստ են, քան բազմիմաստ: Իսկ դա պայմանավորվում է, անշուշտ, բաղճյուսական բարդությունների իբրև հարադրական բարդության մի այնպիսի տեսակի առանձնահատկությամբ, որ ավելի սերտորեն է առնչվում բառերի սովորական շարահյուսական կապակցություններին և կազմվում առավելապես իրենց հիմնական իմաստով գործածվող բառ-բաղադրիչներից: Մենիմաստ են, օրինակ, ազգ ու տոհմ (ազգատոհմ, ազգը՝ տոհմը ամբողջապես), ալան ու թալան (ալան-թալան՝ կողոպուտ, ավարատություն), ալ ու դաղ (ավախ, սարսափ, երկյուղ, զարհուրանք, ահից՝ վախից զողալը), արտ ու արձա (արտ ու արոտ ընդհանրապես, արտեր ու արոտներ), բան ու զոռծ (բան՝ գործ, զբաղմունք, աշխատանք), դարդ ու ցավ (դարդը և ցավը միասին, վիշտ, հոգս, տառապանք), երգ ու պար (եղբար և պարը միասին, երգելն ու պարելը, երգեր ու պարեր, զվարճություն, ուրախություն), զենք ու զրան (սպառազինություն, ռազմական ողջ հանդերձանքը, վրայի բոլոր զենքերը), թիվ ու համար (հաշիվ, մեծ քանակություն), ծամ ու կես (ամեկ և կես ծամ՝ 90 րոպե), խենթ ու խելառ (և՛ խենթ, և՛ խելառ. հիմար, անմիտ, գծավուն), կոշտ ու կոպիտ (և՛ կոշտ, և՛ կոպիտ. բիրտ, անկիրթ, անտաշ), հարս ու փեսա (հարս ու փեսան միասին, հարսեր ու փեսաներ, նորապսակներ) և այլն: Եվ, ընդհանրապես, բազմիմաստ են այն բաղճյուսական բարդությունները, որոնց բաղադրիչները ոչ միայն իրենց հիմնական կամ գլխավոր, այլև երկրորդական իմաստներով են իրար հետ հարադրվում և կամ՝ միասին ստանում են ավելի ընդհանուր, վերացարկված նշանակություններ և գործածվում մի քանի իմաստներով: Հմմտ. օրինակ, աղ ու հաց (1. Աղ և հաց՝ աղքատիկ, համեստագույն կերակուր: 2. Ընդհանրապես կերակուր, սնունդ: 3. Նրախտիք, բարեբարություն: 4. Բարեկամության խորհրդանիշ: 5. Աղ ու հացով պարելու՝ պահեցողություն: օր, մեծ պահք), այլ-բովանդակ (1. Որևէ լեզվի դասակարգված բոլոր տառերի ամբողջություն: 2. Գրագիտություն: 3. Որևէ գիտության, արվեստի գործի հիմնական կամ տարրական սկզբունքը), աչք ու ունք (1. Աչք-ունք՝ աչքեր և հոնքեր: 2. Ընդհանրապես՝ դեմք՝ երես), բերդ ու ամրոց (1. Ամրություն, պաշտպանական շինություն: 2. Պաշտպանություն, պատսպարան), դեռ ու դեն (1. Այստեղ-այնտեղ՝ այս ու այնտեղ: 2. Այս ու այն կողմ, տարբեր կողմեր: 3. Ինչ-ինչ զանազան բաներ: 4. Գործածվում է իբրև հարադրավոր բայի հարադիր), երկար ու բարակ (1. Միաժամանակ և՛ երկար, և՛ բարակ: 2. Մանրամասնորեն, մանրակրկիտ: 3. Երկար ու ձիգ, երկարաձգված, ձանձրացնելու շափ: 4. Ուղածին պես, անփութորեն), լուս ու մունջ (1. Լուսկյաց, լուին, անաղմուկ: 2. Բո-

լորովին լուռ, անձայն, անխոս, լռելյայն: 3. Անտրտունջ, հնազանդորեն», խաղ ու պար (ս1. հաղ ու պարը միասին, երգ ու պար. խաղ ասելը՝ երգելը և պարելը: 2. Զվարճություն, ուրախություն: 3. փխբ. Շատ հեշտ, դյուրին դործ»), ծակ ու ծուկ (ս1. Զանազան անցքեր՝ ճեղքեր, ծակեր: 2. Զանազան թաքստոցներ՝ անկյուններ, թաքնվելու տեղեր: 3. Տարբեր տեղեր, գաղտնարան: 4. Բոլոր տեղերը՝ վայրերը: 5. փխբ. Պակասություն, հոգս, կարիք), մառդ ու կին (ս1. Մարդը և կինը միասին, ամուսիններ: 2. Տղամարդ և կին, տղամարդիկ և կանայք), ոտ ու գլուխ (ս1. Ոտը և գլուխը միասին, ոտքերն ու գլուխը: 2. Մարդու կամ կենդանու ամբողջ մարմինը, ոտից-գլուխ: 3. Անասունի ոտքերն ու գլուխը, խաշացու), տեղն ու տեղը (ս1. Հենց նույն տեղում: 2. Անմիջապես, իսկույն, իսկույն ևեթ: 3. Ամբողջ էություն, ինքնին), տուն ու տեղ (ս1. Հնտանիք, օջախ, բնակատեղ: 2. Ապրուստ, ունեցվածք: 3. Տունը իր ամբողջ սաղջով՝ պարագայքով), օր ու արև (ս1. Կյանք, հույս, ապավեն: 2. Բախտավոր՝ բաղնիկից լի ապրուստ) և այլն:

Այս և նման օրինակները ցույց են տալիս, որ մեկից ավելի իմաստներով են օծովել հատկապես այն բաղձյուսական բարդությունները, որոնք լայն ու սովորական կիրառություն ունեն կենդանի, խոսակցական լեզվում: Եվ, անտարակույս, լայն դործածության հիմքի վրա հենց շատ ու շատ բաղձյուսական բարդություններ ժամանակի ընթացքում իսկապես ճյուղավորվել են, իրենց հիմնական իմաստից բխեցրել նաև այլ իմաստ կամ իմաստներ: Հիշված շատ սովորական աղ ու հաց բաղձյուսական բարդությունը, որ, անշուշտ, նախապես, իբրև աղ ու հաց բառերից կազմված բարդություն, աղքատիկ, համեստագույն կերակուր» իմաստն է արտահայտել (օրինակ՝ «Ժգնավորները աղ ու հացով էին կերակրվում», Բ, ԵԺ, 4,386), իրոք լայն գործածության հիմքի վրա է, որ ընդլայնվել և ձեռք է բերել նաև մյուս՝ «ընդհանրապես կերակուր, սնունդ» (օրինակ՝ «էնքան աղ ու հացընեք կերակր», ԽԱ, ԵԺ, 3,156), «երախտիք, բարերարություն» (օրինակ՝ «Բժժ մարդի աղ ու հացն իսպառ մոռանա, նա երկու աչքով սաղ կբռնանա», ԽԱ, ԵԺ, 2,31), «բարեկամության խորհրդանիշ» (օրինակ՝ «Աղ ու հացով, լաց ու թացով, Առաջն ելավ, խնդիրք արավ», ԶԲ, ԵԺ, 3,115), «պահեցողություն օր՝ մեծ պահք, պատ» նշանակությունները: Եվ կամ՝ կասկած չի կարող, որ շուն ու կատու բաղձյուսական բարդությունը նախ իբրև կենդանիների ընդհանուր, հավաքական անվանում է գործածվել (օրինակ՝ «Դեմ էին շուն ու կատու պահելուն», ՇԹ, Բալ., 232) և ապա՝ դրանից հետո ձեռք բերել նաև «անհաշտ թշնամիներ՝ հակառակորդներ» փոխաբերական իմաստը: Այդպես և, ասենք, սառ ու ձուր սկզբնապես հենց «սառ ու ձուր, սարեր ու ձորեր» (օրինակ՝ «Բացվել էր գարունը, սառ ու ձուր ծաղկել», ԽԱ, ԵԺ, 2,239) իմաստն է աղտահայտել և ապա դրա ընդլայնմամբ նշանակել նաև «Ամայի՝ անմարդաբնակ հեռու տեղեր» (օրինակ՝ «Եմ աման եմ գալիս սառ ու ձուր ընկած», ՂԱ, ԵԺ, 2,8), «զանազանություն, տարբերություն, մեկը մյուսի նկատմամբ իբրև հակադրություն» (օրինակ՝ «Զեր և այն խուժանի մեջ սառ ու ձուր կան», ԶԹ, ԵԺ, 4,53), «լայն ու ընդարձակ տարածություն՝ տեղ» (օրինակ՝ «Սառ ու ձուր ծածկված էր խուռն բազմություն», ԶԶ, ԵԺ, 3,410), «ինչ որ կա, ամբողջը, եղած-չեղածը» (Բոլոր սառ ու ձուր իր փորն ա քաշում», ԽԱ, ԵԺ, 2,65, «Սառ ու ձուր՝ տերտերի փոր»)...

Բազմիմաստ են հատկապես այն բաղձյուսական բարդությունները, որոնց բաղադրիչները իմաստապես ավելի սերտ են կապված իրար հետ և այդ պատճառով էլ համադրական (կցական) բարդություն կազմելու առավել մեծ հիմքեր ունեն: Այդպիսիներից են, օրինակ, այբուբեն||այբ ու բեն, ասուլիս, արդու-զարդ, գունդ ու կծիկ, եմ ու գեռ, ելումուտ, բոն ու բոն, ծակ ու ծուկ, տեղում-տեղը, հալումաշ, միևուհառ, ջառդ ու բուրդ, քառ ու քանդ և այլն, որոնց բաղադրիչները զրավոր խոսքում կամ միայն, կամ մեծ մասամբ միասին են գերվում: Եվ, այնուհանդերձ, բոլոր դեպքերում՝ թե՛ զուտ հարադրական, թե՛ համադրական բաղձյուսական բարդություններում ու (և) շաղկապը միևնույն իմաստաբանական դերն է կատարում, բոլոր դեպքերում նա է հարադրվող բա-

դադրիչները շաղկապում-կամրջում իրար և իր միավորիչ նշանակությունը դրսևորում նրանց մեջ:

Նույն բաղադրիչներից ու շաղկապով և առանց ու շաղկապի կազմված բարդությունները, ճիշտ է, ընդհանուր առմամբ նույն նշանակությունը կամ նշանակություններն են արտահայտում, բայց միաժամանակ ինչ-որ չափով, իմաստային նրբերանգներով տարբերվում են իրարից, հմմտ., օրինակ՝ ալան ու թալան («Ուրեմն կրկին ալան ու թալա՞ն, Կրկին կոխողի բերքը գողանան», ՀՀՊ, ԵԺ, 1, 171) — ալան-թալան («Ալան-թալա՞ն, Կեռ յաթաղան...», ՊՍ, ԵԺ, 4, 188), աչի ու ունի («Աչի ու ունիդ, թարթիչներդ ջո սև են», ԶԶ, 84) — աչի-ունի («Եվ ահուգողով աչի-ունիին (է) նայում», ՂԱ, ԵԺ, 2, 426], բուֆ ու բորան («Հա փրչեցին բուֆ ու բորան, ծաղիկները ամեն տարան», ՀԺ, ԵԺ, 1, 230) — բուֆ-բորան («Բե է առնում բուֆ-բորանից», ՆՁ, ՄՀ), գիշեր ու ցեբեկ («Գիշեր ու ցեբեկ լալիս իմ», ՄՆ, 64) — գիշեր-ցեբեկ («Չորս օր գիշեր-ցեբեկ ձյուն էր եկել, ծածկել սար ու ձոր», ԱԲ, ԵԺ, 1, 566), դես ու դեն («Դես ու դեն ցլլված ամպերն հողմավար Փրնտրում են, ասես, մի տեղ, օթեան», ՀԺ, ԵԺ, 1, 101) — դես-դեն («Նայում եմ դես-դեն», ՀԺ, ԵԺ, 1, 409), լավ ու վառ («Գործն է խոսվում լավ ու վառ», ՀԺ, ԵԺ, 2, 150) — լավ-վառ («Ժամանակով մարդու մեկը լավ-վառ ապրել է այս աշխարհում», ԱԻ, Ե., 3, 524), ուրախ ու զվարթ («Նկյ տեսակ դեպքերը նրա միշտ ուրախ ու զվարթ տրամադրությունը չէին խանգարում», ՂԱ, ԵԺ, 2, 107) — ուրախ-զվարթ («Պարողները՝ ուրախ-զվարթ նրանց վեճին ծոր կուտան», ԱԻ, ԵԺ, 2, 43) և այլն: Դրանք, ինչպես համեմատությունն է ցույց տալիս, իրոք, ճիշտ նույնը չեն. առաջին՝ ու շաղկապով կազմված ձևերում բառ-բաղադրիչները մի տեսակ առանձնանում և, կարծես, հանդես են գալիս իրենց «անկախ» իմաստներով, իսկ մյուս՝ բաղադրիչների անմիջական հաջակցությամբ կազմված ձևերում, ընդհակառակն, ավելի սերտորեն են կապվում իրար հետ և մի ընդհանուր նշանակություն արտահայտում:

Այսպիսով՝ բաղճյուտական բարդությունները, իբրև հարադրության մի առանձին տեսակ, իմաստաբանական հատուկ կառուցվածք ու առանձնահատկություններ ունեն և իրենց՝ ինչպես բաղադրիչների դրսևորած բազմազան իմաստային կապերով ու հարաբերություններով, այնպես էլ արտահայտած ընդհանուր նշանակություններով զգալապես ճոխացնում-հարստացնում են հայոց լեզվի բառապաշարը և նրա իմաստաբանական կազմը:

ՀԱՄԱՌՈՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԲ, ԵԺ — Ա. Բակունց, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1974:
 ԱԲ, ԽԵԿ. — Ա. Խեկոյան, Երկեր, Երևան, 1980:
 ԱԻ, Ե — Ավ. Խաճակյան, Երկեր, հ. 3, Երևան, 1959:
 ԱԻ, ԵԺ — Ավ. Խաճակյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1974:
 ԱՂ, ԱՌ. — Ա. Ղանալեյան, Առածանի, Երևան, 1960:
 ԳԷ, ԱՏ — Գ. Էմին, Այս տարիքում, Երևան, 1968:
 ԿԶ, ԸԵ — Ե. Զարեց, Ընտիր երկեր, Երևան, 1955:
 ԽԱ, ԵԺ — Խ. Արմյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2—3, Երևան, 1948:
 ՀԺ, ԵԺ — Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1—4, Երևան, 1940—1951:
 ՀՀ, ԿԺ — Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 1—3, Երևան, 1964—1965:
 ՀՀՊ, ԵԺ — Հ. Հայրապետյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1965:
 ՀՍ, ՍԲ — Հ. Սահյան, Սեզամ բացվիր, Երևան, 1972:
 ՂԱ, ԵԺ — Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1962:
 ՂԳ, Բով. — Մ. Գալստյան, Բովտուն, Երևան, 1974:
 ՆԴ, ԵԺ — Նադ. Դոն, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1955:
 ՆՁ, ՄՀ — Ն. Զարյան, Մի հատորյակ, Երևան, 1975:
 ՆՃ, Բան. — Ն. Հովհաննիսյան, Բանաստեղծություններ, Երևան, 1951:
 ՇԺ, Բալ. — Շ. Թաթևյան, Բալենի, Երևան, 1980:
 ՊՊ, ԵԺ — Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962:

ՊՍ, ԵՃ—Պ. Սեւակ, *Երկերի ժողովածու*, հ. 2, 4, Երևան, 1972—1973:

ՋԲ—Եջիվանու քնարքա, Երևան, 1959:

ԲՊ, Ե—Բ. Պատկանյան, *Երկեր*, Երևան, 1955:

ՍՍ, ՀԲԲ—Ստ. Մալխասյան, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 1, Երևան, 1944:

ՍՆ—«Սայախ—Նովա», Երևան, 1959:

ՎՏ, ԵՃ—Վ. Տերյան, *Երկերի ժողովածու*, հ. 1, Երևան, 1960:

Բ, ԵՃ—Բաֆֆի, *Երկերի ժողովածու*, հ. 4, Երևան, 1963:

СЕМАНТИЧЕСКАЯ СТРУКТУРА СОЕДИНИТЕЛЬНЫХ СЛОЖНЫХ СЛОВ

АЛЕКСАНДР МАРҚАРЯՆ

Резюме

Соединительные сложные слова как несинтетические словосложения, образующиеся в армянском языке с помощью соединительного союза *և*, иногда *և* («и»), имеют своеобразную семантическую структуру. Они образуются сопоставлением компонентов, связанных между собой различными отношениями и значениями. Эти компоненты в основном выражаются: а) повторами; б) синонимами; в) антонимами и г) соотносительными друг с другом словами.

Соединительные сложные слова отличаются и другими семантическими особенностями: а) в их структуре компоненты, с одной стороны, выступают в своих собственных значениях, с другой—выражают новое общее значение; б) многочисленные соединительные сложные слова образуются перемещением компонентов; в) многие соединительные сложные слова употребляются и без соединительного союза *և*, *և* («и»), отличаясь от таких форм смысловыми оттенками.

Соединительные сложные слова выражают многообразные смысловые значения между разными словами и, таким образом, в достаточной мере обогащают словарный состав и семантическую систему армянского языка.